Նաիրի Ինշուրանս
Ապահովագրական ընկերություն

**Հավելված 1**
Տնօրինության 29.11.2018թ. թիվ 18 որոշման

# «ՎՐԱՍՏԱՆ ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

**Խմբագրություն՝ խմբ. ՎԱ01**
**(Ակտիվի դաս՝ հրապարակային)**

## 1. Ի՞ՆՉ Է «ՎՐԱՍՏԱՆ ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ

«ՎՐԱՍՏԱՆ ՄԵԿՆՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ապահովագրական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) 7-օրյա ապահովագրություն է Վրաստան մեկնող անձանց անկանխատեսելի բժշկական և այլ ծախսերի համար:

## 2. ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

Ծրագրի շրջանակներում կարող են ապահովագրվել պայմանագրի կնքման պահին մինչև 85 տարեկան /ներառյալ/ ֆիզիկական անձինք:

## 3. Ի՞ՆՉ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՔ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

Ծրագրի շրջանակներում ստանում եք հատուցում հետևյալ ծախսերի համար՝

- *Անհետաձգելի (շտապ) բժշկական ծառայության ծախսեր՝*
  *այդ թվում՝ ծախսեր, որոնք հետևանք են՝*
  - *մարմնական վնասվածքների,*
  - *հանկարծակի սուր թունավորման,*
  - *ջրահեղձման,*
  - *շնչահեղձման,*
  - *սուր ատամնացավի դեպքում պատճառի վերացում:*
- *Պատահարի ժամանակ առաջացած բուժտրանսպորտային ծառայությունների ծախսեր*

## 4. Ի՞ՆՉ ԾԱԾԿՈՒՅԹ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍԸ

Ապահովագրական գումար՝ **800,000 ՀՀ դրամ**

Ապահովագրավճար՝ **1,500 ՀՀ դրամ**

## 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՒ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐ

Առանձին ռիսկերի գծով ծախսերը հատուցվում են հետևյալ առավելագույն սահմանաչափերով՝

➢ քրոնիկ հիվանդությունների՝ կյանքին վտանգ սպառնացող սրացումներ - 300,000 ՀՀ դրամ,

➢ ատամնաբուժական ծառայություններ՝ ատամի նյարդի հեռացում կամ ատամի հեռացում - 50,000 ՀՀ դրամ,

➢ այլ ծախսեր - փաստացի կատարած ծախսերի 50%, սակայն ոչ ավել, քան 450,000 ՀՀ դրամ:

## 6. Ի՞ՆՉ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ է.

– Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,
– Ապահովագրված անձի անձը հաստատող փաստաթուղթ:

## 7. ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

– 0-85 տարեկան անձանց ապահովագրելու հնարավորություն,
– Ուղևորության ընթացքում հավանական ծախսերի կրճատում:

**Ծրագիրը կարգավորվում է «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ խորհրդի կողմից 29.04.2016թ. թիվ 33 որոշմամբ հաստատված «Արտերկիր մեկնողների աջակցության ապահովագրության պայմաններ»-ով:*